ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/123

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7373-2021 գրությամբ «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2416-2021 գրության հիման վրա 11.05.2021թ. թիվ 26/26-1/7373-2021 գրությամբ նախաձեռնել է «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/123 ընթացակարգի շրջանակներում 18.05.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2416-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ՄԱՐ-ՄԱԴԵԼ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

24.03.2021թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը ճանաչվել է ընտված՝ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով: 05.04.2021թ.-ին Armeps (www.armeps.am) համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը: Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ.) պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և դրա կատարման ու որակավորման ապահովումները:

Մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը ստացվել է փոստային առաքման միջոցով 21.04.2021թ.-ին:

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.04.2021թ. N ՊՆ/02/1633-2021 պարզաբանումն հարցումը և դրան ի պատասխան ուղարկված 28.04.2021թ. N 01.1/26-1/6440-2021 պարզաբանումը՝ Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով 30.04.2021թ. Մասնակիցը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից՝ Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/123 ընթացակարգի շրջանակներում 18.05.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/123 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/123 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 24.03.2021թ. հրավիրված նիստին գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.04.2021թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 05.04.2021թ. ընթացակարգի մասնակիցներին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագրի նախագիծ և պայմանագիր կնքելու ծանուցում՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում պայմանագիր կնքելու նպատակով, սակայն «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը

ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ.) պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և դրա կատարման ու որակավորման ապահովումները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 30.04.2021թ. Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7373-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2416-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիր:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 24.03.2021թ. հրավիրված նիստին գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.04.2021թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 05.04.2021թ. ընթացակարգի մասնակիցներին էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագրի նախագիծ և պայմանագիր կնքելու ծանուցում՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում պայմանագիր կնքելու նպատակով, սակայն «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.04.2021թ.) պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը և դրա կատարման ու որակավորման ապահովումները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 30.04.2021թ. Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 ***Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:*** Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր....:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ***Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման

ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2416-2021 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացվելիք փաստաթղթերը ստացվել է փոստային առաքման միջոցով 21.04.2021թ.-ին:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուին ուղղված 14.05.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/7710-2021 գրությամբ խնդրել է տրամադրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից փոստային առաքման միջոցով ուղարկված ծրարում ներառված փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 26.05.2021թ. էլեկտրոնային եղանակով տրամադրել է պահանջվող փաստաթղթերը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում**, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ գնահատելով գործում առկա ապացույցները՝ համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, արձանագրում եմ, որ «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ն, 05.04.2021թ. ստանալով պայմանագիր կնքելու առաջարկը, Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 16.04.2021թ., կապի կազմակերպությանը, այն է՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին,

հանձնել է ստորագրված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները, որոնք Պատվիրատուի կողմից ստացվել են 21.04.2021թ., որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, և առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը, որպես ընտրված մասնակից, չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.05.2021թ. թիվ 26/26-1/7373-2021 գրությամբ «ՄԱՐ-ՄԱԴԷԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**